

անտանկի և սոսկալի շարշարանացն իւրոց, և զարբայն զդեռահաւատ հաղորդ երկնաւոր շնորհացն արարեալ հանդերձ այլովքն դարձելովք և լուսաւորեցելովք կառոյց պատնէշ հզօրագոյն ընդդէմ խաւարածից մեքնայիցն սատանայի. որ ըզհիմանսու թիւն ուսուցանէր հեռացելոցն յԱստուծոյ և վտարելոցն ի չարիս, և յօրինեաց պատուարան մարդկան՝ զխորան վկայութեան Աստուծոյ սուրան և ընտրեալն և կացուցեալն ի Տեսունէ յօրէնս նորա՝ ընդ հզօր Աջակցին իւրոյ գերաշուք վսեմափառ արքային, զլուսանիշ Տաճարս սրբոյ Էջմիածնի, որպէս զօրացան Չօրաբարէլ և Յետու Քահանայն մեծ ի գեղեցկատիպ վերանորոգումն հնոյն Երուսաղէմի:

Արդ՝ երջանիկ է օրս այս և երջանկութիւն ցանկալի ազգիս Հայկաղանց. քանզի ի սերկեանս կատարեմք զտօն կառուցման Քրիստոսահիմն և լուսակերտ Մօրս լուսոյ սրբոյ Աթուղիկէ Էջմիածնի. որ է աղբիւր ջրոյ կենդանւոյ հոսեցելոյ ի դարաստանէն երկնից ի պարտէզս Քրիստոսատունկ անդատանիս, ի բեղմնաւորեալս բանիւն կենաց, ի տաճարս իմաստութեան ի տաճարս Աստուծոյ կենդանւոյ կառուցեալ ի գնացս Հողւոյն երկնավտակ շնորհաց: Սա է տեղի և տուն Աստուծոյ. որ զերազանցի քան զՏապան՝ նոյեան, զզարմս Արամեան ի խռովայոյզ հեղեղէ մեղաց փրկեալ, և քան զերկիր Աւետեաց պարարտացեալ բլրխելով ինքնինէ զկաթն և զմեղր՝ զօրէնս Աստուծոյ և զխորհուրդս աւետեացն երկնաւորաց. և քան զտաճար Սողոմոնեան վայելչացեալ փառօք, յորոյ ի սէր զիղձ և զտենչանս սրտից մերոց վառեալ ընդ մարդարէին աղաչեմք «Տէր սիրեցուք և մեր զվայելչութիւն տան քոյ և զտեղի յարկի փառաց քոց»:

Քարէ. Ա. Ե. Զ. Կ. Ի. Նոյն խնամք և սէր մարդասիրութեան Արարչին քաջարթուն դէտ սուրբ եկեղեցւոյն իւրոյ, ընտրեալ կարգեաց յԱթոռ բազմաբիրտն սուրբ նահատակին իւրոյ և արժանապատէ Քահանայապետին իւրահաստատ եկեղեցւոյս զՉեղ զԱ. Ե. Զ. Կ. Ի. Հայրդ ազգիս Հայոց ի պայծառութիւն սուրբ Տաճարին հիմնելոցն յԱւարեալսն և ի Մարգարէս, որպէս և նոյն սուրբ եկեղեց յս մանկունքն ի բարեբանութեան

անդ երգեն առ Աստուած « ի վերայ հիման Առաքելոց և Մարգարէից շինեցի զՔո սուրբ դեկեղեցի, զսա պահեա ի խաղաղութեան », որով զօրացեալք համախմբեալքս ծառայք Աստուծոյ ընտիր Ա. Ե. Զ. Կ. Ի. Քահանա Քահանայապետի որպէս և համօրէն լրութիւն ազգիս. խնդրեմք յամենախնամ և յառատասիրու մարդասիրութենէ Արարչին Աստուծոյ անշարժ և անասան պահպանել զսուրբ եկեղեցի իւր ի դրանց դժոխոց, ըստ այնմ « և ահաւասիկ ես ընդ Չեղ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի »: Եւ ինքնապատէ Ա. Ե. Զ. Կ. Ի. Քահանա Փետայիդ նորին տացէ կեանս երկայնս և խաղաղականս հանդերձ ամենայն բարօրութեամբ և առողջութեամբ ի վայելչութիւն իւրակառոյց Տաճարիս և ի պարծանս և ի լուսաւորութիւն ազգիս Հայոց. ամէն:

Ո. Կարասպէր Գլխիֆորէան:

Ի 1874 - 7 յ 30 Ն Մ-յի-ի

Ի Ս. Էջմիածնէ:

Հ Ա Յ Ի Ե Ն Ա Կ Ա Ն Ա Ե Զ Ո Ւ Ի

Ե Ի

Կ Ր Օ Ն Ի Ի Ր Ա Ի Ո Ւ Ն Բ

Աշխարհիս մեջի այսքան արիւնահեղ պատերազմների պատճառն ի՞նչ է. և ինչո՞ւ համար զուր տեղից իրարի կոտորում են (հարցոց ինձ մի Պարսկաստանցի Հայկազուն երիտասարդ), Ամեն ազգ. և ամեն տէրութիւն իրան մեջ ունի քաղաքական, Ազգային, և Կրօնական իրաւունք. և այն իրաւունքները ամրապնդելու համար՝ հաստատուած են զանազան տեսակ բարեկարգ և օգտակար օրէնքներ, և ուրիշ որ եիցէ տէրութիւն կամ ազգ եթէ հակառակի նոյն իրաւանց՝ այն ժամանակ կը հրատարակուի արիւնահեղ պատերազմ, մինչև որ մէկը միւսին յաղթէ՝ և հաստատուի դաշնակաւոր խաղաղութիւն (պատասխանեցի). բայց այն ազգը որ ոչ քաղաքական իշխանութիւն ունի, ոչ զօրք ունի, և ոչ զօրութիւն, (ինչպէս է մեր ազգը), միթէ պարտաւոր-



եալ չէ՞ իւր հայրենական լեզուի և կրօնի իրաւունքը պաշտպանել:—Այդ բանին տարակոյս չկայ, զի մեր արժանայիշատակ նախնիքը այս սուրբ իրաւանց համար շատ հալածանքների զիմացած և արիասրտութեամբ նահատակուած են:—կերևի թէ Հայոց Արամ՝ նահապետը հայրենի լեզուի իրաւանց դէմ մեղանշած է նա, երբ որ գնաց Պապադովկիոյ վիճակին տիրեց՝ նոյն կողմերի ազգերին խստիւ պատուիրեց՝ որ Հայերէն խօսին. նմանապէս և Արշակունեաց Արշամ թագաւորը մեղանշեց, նա էլ Ենանոս Բագրատունեաց նախարարին (որ Հրէայ էր) և նորա որդւոց ստիպեց՝ թողուլ հայրենի կրօնը՝ և դառնալ ի Հիթանոսական պաշտօն:—Այո, կռապաշտութեան ժամանակները որ և իցէ իրաւունքները միշտ ոտնակոխ կը լինէին, ինչպէս որ Պարսից կրակապաշտ անօրէն թագաւորները, մեր հայրենի սուրբ կրօնը Հայաստանի միջոցը բոլորովին ջնջելու համար, ի՞նչ չարաչար հնարքներ ի գործ չը դրին, զանազան խորանակ խաբէութիւններով. բայց ոչ ինչ մի օգուտ չկարողացան ձեռք բերել իրանց համար. Պարսից մոլեռանդ մոգեր և մոգպետներ չէին որ թելադրեցին Յազկերտ անօրէն թագաւորին, որպէս զի Հայերին ստիպէ իրանց շարժուիլ օրինաց հետևելու. (հակառակ կրօնական իրաւանց). հետևաբար և եղաւ մեծ արիւնահեղ պատերազմ Աւարայրի դաշտումը. և Հայոց քաջ նախարարներից ոմանք անձնանուէր զօրքերով նահատակուեցան նոյն պատերազմի մէջը, որոց պիտաւորի անունովը ասուեցաւ Վառդանաց Գեորգի. և մինչև ցայսօր նոցա արժանաւոր տօնախմբութիւնը մեր Ս. Եկեղեցին հանդիսաւոր կիրպով կատարում է. նմանապէս և Մամիկոնեան քայն Վահան իւր հայրենի օրինաց պահպանութեան համար՝ ընդդիմացաւ Պերոզ թագաւորի անթիւ զօրաց՝ և յաղթեց, զի Հայոց ազգը մինչև ցարդ իւր վրայ իշխող տէրութեանց միշտ ցոյց տուած է իւր հաւատարիմ հպատակութիւնը, և անձնանուէր ծառայութիւնը. սակայն իւր հայրենի լեզուի, և կրօնի իրաւունքը պաշտպանելու համար՝ սաստիկ հալածանքների համբերած է:— Լանկթեմուրի համար էլ ասում են թէ Հայերի վրայ մեծ հալածանքներ հանած է,

—Այո, այն բարբարոս և անօրէն բռնակալը բաւական չը համարելով այնքան աւերութիւններ (որ ի գործ դրաւ), մեր հայրենի կրօնը և լեզուն Հայաստանից բոլորովին ջնջելու համար՝ Հայերէն լեզուի կրօնական, պատմական, և ուսումնական հազուագիւտ գրքերը հաւաքեց և պրեկտուաւ. և շատ գրքեր էլ հետը տարաւ, և Սուրբ Ղափ բերդի մէջ բանտարկել տուաւ. և ապագայ սերնդոց վրայ էլ նշովք դրաւ՝ որ ոչ ոք այն տեղից զիրք դուրս չբերէ:—Ապա գանք մեր այսքան խօսուածների բուն նպատակին: Ընցեալ տարիները մի գործ պատահեցաւ ինձ գնալ Բեյրութ՝ կողմերը. մի Շատախ անունով մեծ գիւղաքսղապի մէջ բնակվում էր իւր բաղմաթիւ արբանեակներովը մի Բեյրութ Ենի. սա մեծ ազնուցութիւն ունէր այն գաւառի Հայ և Բեյրութ բնակիչների վրայ. և Օսմանեան տէրութեան կողմից դրուած գործակալին ոչ ինչ բանի տեղ չէր համարում. ինքզինքը համարում էր իրր մի մարգարէ, զի ճշմարտութիւնն նման իրան գաղտնի լրտեսների միջոցաւ կարող էր զանազան տեսակ գուշակութիւններ անել՝ և հաւատացնել պարզամիտ Բեյրութ ժողովուրդոց, որոնք սա նման պաշտում էին. սա Հայերի կրօնին մոտիկ տալը իրան համար պիղծ էր համարում, և խիստ հալածանք հանեց նոյն գաւառի մէջը գտնուած Հայերի վրայ, որոնք թողած իրանց տները, և պղինները, արտերը, և բոլոր կալուածները, միանգամայն և իրանց հայրենիքը՝ իրանց գերդաստանի ձեռններիցը բռնած՝ լալով ողբալով գաղթեցան Վանայ կողմերը. և մինչ ցարդ իրբև մուրացկան քաղաքի փողոցներումը թափառում են, իսկ ոմանք Վանայ գիւղերումը բնակվեցան. Այս անօրէն Ենիք հարկադրում էր Հայերին, (զանազան խորամանկ հնարքներով) թողուլ իրանց հայրենաւանդ սուրբ կրօնը՝ և թուրքանալ. երբ որ մերժում էին նորա հրամանը՝ այն ժամանակ անհնարին տառապանքներով նեղացնում էր. և երբեմն բարկանալով բարբանջում էր իւր արբանեակներին. Հայերի եկեղեցիների հետ աւելի գործ չունենալ. ապա օչխատեցէք արգելք լինիլ նոցա մանուկների համար ուսումնարան բաց անել, զի այս միջոցաւ մեր նպատակին կը հասնենք. մնա



լով նորա մտաւոր կուրուժեան մէջը՝ կրօնն էլ լեղուն էլ կը մոռանան, և հեռաբար կը թուրքանան ամենքն էլ. այս որ զգացին խղճալի Հայերը, խկոյն դուրս եկան այն գաւառիցը՝ և այնքան գեղեր մնացին ամալի, և անմարդաբնակ, և այն բարբարոս շէշիւ իւր նպատակին չը կարողացաւ հասնիլ. — Ինչպէս որ լսվում է Մուշի. և Վանայ նահանգներումը դարձեալ այդպիսի հարստահարութիւններ, սրբապղծութիւններ մինչև ցարդ պատահում է այն անօրէն Բրէտէնի զորքինակ վանք և եկեղեցի կողոպտել, մարգաստանութիւններ անել և լնալ Արեւմտ հրաւիրենք խոնարհարար մեր Ազգասէր Վեհափառ Գեորգ Գ. Աստուածարեալ Աթոռակիսի Հայրական ուշադրութիւնը այնպիսի հարստահարեալ ազգայնոցս վերայ, որպէս զի արժուն և անձնադիր հովուի նման՝ հսկէ իւր ամեն աշխարհ ցրուած հովուներ ոչխարների վրայ. անգուժ ոչխարազրկատ պատառող գայլերի ի զոհ չը մատուիլ. — Բայց մի կողմից էլ միտիմարվում ենք, տեսնելով մեր այժմեան Հայոց ազգի գլխաւոր տիրող հպատակասէր բարեխնամ Ռուսաց, Օսմանեան, և Պարսից տերութիւնները, որ ցանկանում են, և մեծ ջանք են ի գործ դնում, որպէս զի թերևս Հայոց ազգն էլ Արտուղացի լուսաւորեալ ազգերի նման՝ ճանաչէ իրան լեզուի և կրօնի հրաւանքը, և զարգանայ բարոյական, և նիւթական յառաջադիմութեամբ. և մեր Վեհափառ Աթոռակիսի գովելի բաղձանաց համաձայն՝ արտօնութիւն են տալիս ամեն մի Հայորձակ քաղաքներումը, և զեղբուրումը հաստատել հոգևոր, և ծխական ուսումնարաններ ոչ թէ միայն տղայոց՝ այլ և ասպազ սերնդոց ուսեալ մայրեր պատրաստելու համար՝ Օրիորդաց համաց և աղգային տուրքերով, կամ աղբիւրներով կառավարել՝ որպէս զի իրանք էլ ունենան այսուհետև լուսաւորեալ, և քաղաքակիրթ հպատակներ ի պարծանս իրանց փառաւոր և պանծալի անուանց. որով և պարտաւորցնեն տիրասէր և հաւատարիմ Հայոց ազգին ամեն ժամանակ ի բոլոր սրտէ լիաբերան բարեմաղթութիւններ վեր առաքել առ Ամենարայ ձրեայն Աստուած, նոցա անգին և երջանիկ կենաց բարօրութեան համար:

Վ. Ա. Գ. — Լ. Մէքսայ Վ. Փափազխանյ.

ԲԵՐՈՉ.

Ի ՇԵՄԱՀՄՈՒՅ ԳԻՒԴ:  
(Ը. Լ. — Լ. Տ. Կարգը):

Հատերը այնպէս կկարծեն թէ՛ նախնեաց կանգնած այնքան միլիոններ արժած աստուածային տաճարները մեր թագաւորական իշխանութեան զօրութենէն արտադրեալ են: Սակայն բառ ինչ նորա բոլորն ալ Հայաստանեայց եկեղեցւոյ հոգևոր և մարմնաւոր գաւախների առ միմեանս ունեցած վստահութիւններէն ծագած են. Մի՞թէ այս օր Հայ ազգը 15000 — 20000 ուրլի դրամով ի կտար ածուլու մի վանք շինելու կարողութիւն չունի: Այլ օք չի կարող ժխտել այս հարցը. Այս ԲՆՆԻ 15 տարի է 18000 ուրլի դրամով սակարկեալ մի վանուց շինութիւնը գլուխ չի դալի. Այն ալ այնպիսի մի վանքի, որուն մէջ գտնուած դերեզմանին վերայ, որչափ կանայք իւրեանց ձակատի մի քանի ոսկիները քցած են, քանի քանի հարսներ՝ տանտիկիներ իւրեանց ամուլութեան, կամ զաւակաց հիւանդութեան, կամ անձնի տկարութեան և կամ ինչ և իցլ մի թշուառ դէպքի առիթով, ապարանջանները, օղեր, մանեակներ նուիրած են, Աւստաւորների մատաղների թիւը և դորանցից զայցած արդիւնքը բաւականին մեծ պիտի լինի. վասն զի Սիւնեաց Արցախայ, Փայտակարանայ, Նախիջևանայ, Երնջակու, Գողթնու, Վայոց ձորի, Հարուբոյ, Վեաուաց, Գառնու ու Զանգուպասարներու, Կոտայից, Նոր Պայազտու, Ծաղկաձորու, Ապարանու, Հիրակու և մինչև անգամ Գանձակայ գաւառներէն կգան: Միայն ուխտին ժամանակ 12000 — 15000 կզոյանայ:

Այս հոշակաւոր տեղը Վայոց ձորի Սուրբ Խանուանուած ուխտատեղին է, ուր մի նոր վանք շինուելու համար հանդուցեալ Մատթէոս Աթոռակիսի իշխանութեան բոլոր ժամանակն ժողովք եղաւ, նոյն ուխտատեղւոյ գտնուած գաւառի Մալիշկայ գիւղի Տէր Առաքելի ձեռամբ. Թէ ինչեր անցկացաւ այս միջոցներին, ի՞նչ խաղեր խաղուեցան, ինչպէս ժողովուրդը տեսնելով եղածը և հասկանալով զրիթէլ դէպ ի թերահաւատութիւնը զիմեց: